ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 ապրիլի 2017թ. N 21*

2. ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ և ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ 2017թ. բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով և ի կատարումն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի, 2017թ. հունվարի 1-ից ծնողական վճարները ընդամենը 28320.0 հազ. դրամ համարվում են տեղական վճարներ և որպես եկամտատեսակ պետք է արտահայտվեն համայնքի բյուջեում: Բացի այդ անհրաժեշտություն է առաջացել աղբահանության վարձավճարների գանձման տարեկան առաջադրանքը 2500.0 հազ. դրամ ավելացնելու համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Իջևան համայնքի 2017թ. բյուջեի եկամտային և ծախսային մասն ավելացնել 30820.0 հազ. դրամ: Եկամտային մասի ավելացված գումարից 28320.0 հազ. դրամ հատկացնել 46.5. բաժնի 900375001550 հաշվին, 2500.0 հազ. դրամ 46.5. բաժնի 900375121499 հաշվին: Բյուջեի ծախսային մասում ավելացված գումարից 14830 դրամ հատկացնել 9.1.1 բաժնի 4511 հոդվածին, այդ թվում թիվ 1 մանկապարտեզին 7000.0 հազ. դրամ, թիվ 5 մանկապարտեզին 3930.0 հազ. դրամ, թիվ 8 մանկապարտեզին 3900.0 հազ. դրամ:
2. 09.05.01 բաժնի 4511 հոդվածին հատկացնել 13490 հազ. դրամ, որից 7620,0 հազ. դրամ «Իջևանի երաժշտական միջնակարգ դպրոց» ՀՈԱԿ-ին 2060.0 հազ. դրամ «Ավանդույթ» ՀՈԱԿ-ին, «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին 3810,0 հազ. դրամ:
3. Վերոնշյալ գումարից 400.0 հազ. դրամ հատկացնել 1.1.1 բաժնի 4234 հոդվածին, 60.0 հազ. դրամ 4221 հոդվածին, 2040.0 դրամ 8.4.51. բաժնի 4239 հոդվածին:
4. Հաստատել 2017թ. տարեկան ճշգրտված բյուջեն 537990.7 հազ. դրամ եկամուտների 538074.5 հազ. դրամ վարչական բյուջեի, 280.9 հազ. դրամ ֆոնդային բյուջեի ընդամենը 538355.4 հազ. դրամ:

Բյուջեի դիֆիցիտը կազմում է 364.7 հազ դրամ, որի ծածկմանն է ուղղված 364.7 հազ դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 83.8 հազ դրամ վարչական, 280.9 հազ դրամ ֆոնդային բյուջեի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 ապրիլի 2017թ. N 22*

## 3. ԻՋԵՎԱՆԻ ԳԱՆԻՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևանի Գանինի փողոցում "Իջևան սիթի" առևտրի կենտրոնի շրջակայքում տրանսպորտային երթևեկությունը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել երթևեկությունն իրականացնել միակողմանի սկզբունքով տեղադրելով համապատասխան երթևեկության նշաններ: Հաշվի առնելով վերոհիշյալը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Իջևան քաղաքի Գանինի փողոցում "Իջևան սիթի" առևտրի կենտրոնի շրջակայքում տրանսպորտային երթևեկությունն իրականացնել միակողմանի սկզբունքով տեղադրելով համապատասխան երթևեկության նշաններ:
2. Երթևեկության համապատասխան նշանների տեղադրման համար համայնքի 2017թ. ֆոնդային բյուջեից հատկացնել 650 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*28 ապրիլի 2017թ. N 23*

## 4. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություններ են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով ,

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| հհ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 29.8 |
| 2 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 24.5 |
| 3 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 19.95 |
| 4 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 18.0 |
| 5 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 51.5 |
| 6 | Բնակելի կառուցապատում | Երևանյան փ. | 34.0 |
| 7 | Բնակելի կառուցապատում | Երևանյան փ. | 54.0 |
| 8 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 25.1 |
| 9 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 16.0 |
| 10 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Արցախյան փ. | 22.2հող/22.2շին |
| 11 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Նալբանդյան փ. | 24.0հող/24.0շին |
| 12 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Արցախյան փ. | 21.7հող/21.7շին |
| 13 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Երևանյան փ. | 32.0հող/32.0շին |
| 14 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Արցախյան փ. | 18.0հող/18.0շին |
| 15 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 18.0 |
| 16 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 21.8 |
| 17 | Ընդհանուր օգտագործում | Երևանյան փ. | 2x1.0 |
| 18 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 1.0 |
| 19 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 6x19.8 |
| 20 | Ընդհանուր օգտագործում | Երիտասարդական փ. | 19.8 |
| 21 | Հասարակական կառուցապատում /ինք. առևտրի սրահ/ | Մետաղագործների փ. | 78.4հող/78.4շին |
| 22 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Վահինյան փ. | 46.9հող/46.9շին |
| 23 | Հասարակական կառուցապատում /ինք. առևտրի սրահ/ | Երևանյան փ. | 17.7հող/58.66շին |
| 24 | Հասարակական կառուցապատում /ինք. առևտրի սրահ/ | Երևանյան փ. | 4.0հող/12.6շին |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Բնակելի կառուցապատում | Արովյան փ. | 21.0 |
| 26 | Հասարակական կառուցապատում /ինք. հաս. սպաս. օբյեկտ/ | Արովյան փ. | 15.6հող/15.6շին |
| 27 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 19.8 |
| 28 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Բլբուլյան փ. | 47.46հող/47.46շին |
| 29 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 41.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 ապրիլի 2017թ. N 24*

# 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 28.03.2017թ N 06/11.2/1639-17 գրությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 26 դրական եզրակացությունն, ու ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16 րդ հոդվածի 27-րդ մասով, „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծի 0.334 հա մակերեսով հողամասի /11-001-0249-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համաձայն հավելվածի.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը

| Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր | Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության |

2. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով ՀՀՇՆ 30-01-2014 „Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում„ շինարարական նորմերի պահանջները:

3. „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^{3}$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող հետևանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*28 ապրիլի 2017թ. N 25*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## 6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել Ալբերտ Գեորգիի Դավթյանը իրեն պատկանող Իջևան քաղաքի Բլրուլյան փողոցի 5/15 հասցեի <<հացի փռան>> սպասարկման և շահագործման համար տրամադրված 0.05 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերից փոխադրելու արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողերից բակ արդյունաբերական օբյեկտների հողերի կազմ փոխադրելու նպատակով: Հողամասի վրա առկա է հացի փուռ և ծածկ /սեփականության վկայագիր տրված 26.12.1996թ

Հաշվի առնելով վերոգրյալն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 70-րդ կետի պահանջներով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը ներկայացնելու նպատակով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/.

Իջևան քաղաքի Բլրուլյան փողոցի 5/15 հասցեի <<հացի փռան>> սպասարկման և շահագործման համար տրամադրված 0.05 հա մակերեսով հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմից հանելու և ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կազմի մեջ փոխադրելուն, իսկ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողերից /բակ/ արդյունաբերական օբյեկտների հողերի կազմ փոխադրելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԱՐՏՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 ապրիլի 2017թ. N 26*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## 7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.01773հա մակերեսով հողամասը /11-001-0222-0003 ծածկագրով հողամասի մի մաս/ ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ նշված հողամասը փոխանցվել է Իջևան համայնքին է փոխանցվել որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամաս` գործառնական նշանակությունը այլ հողեր, և ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր:

Հաշվի առնելով վերոգրյալն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 70-րդ կետի պահանջներով` ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը ներկայացնելու նպատակով, համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/`

Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.01773հա մակերեսով հողամասը /11-001-0222-0003 ծածկագրով հողամասի մի մաս/ գյուղատնտեսական նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը այլ հողեր/ հողամասերի կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը` հասարակական կառուցապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՋԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԱՐՏՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
*28 ապրիլի 2017թ. N 27*

**8. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 1ՔՄ-Ի ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն է ներկայացվել Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, 7.04291հա մակերեսով /ծածկագիր 11-001-0181-0111/ գյուղատնտեսական նպատակով անջրդի վարելահողը աճուրդային կարգով օտարելու և 1քմ-ի մեկնարկային գին որոշելու մասին:

Քննարկելով համայքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն, Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, 7.04291հա մակերեսով /ծածկագիր 11-001-0181-0111/ գյուղատնտեսական նպատակով անջրդի վարելահողը աճուրդային կարգով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հողամասի 1քմ-ի մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 50%-ի չափով՝ 33 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 ապրիլի 2017թ. N 28*

ՆԱԽԱԳԻԾ

## 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 14.01.2016թ N 01/16.1/4325-16 և ՀՀ Տավուշի մարզպետի հանձնարարականների և հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում Իջևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված մի շարք հողամասեր /համաձայն կից աղյուսակի/ նշված է որպես ոչ էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային` նշանակության հողամասեր, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 70 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների /համաձայն կից աղյուսակի/:

աղյուսակ

| Գործ ի N | Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը /կադաստրային ծածկագիր/ | Տարածքի մակերես ը /հա/ | Գլխավոր հատակագծում հողամասի նախատեսվող նպատակային և գործառնական նշանակությունը | Տարածքի մակերես ը /հա/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Նպատակային նշ. | 1.3173 | Նպատակային | 1.3173 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անտառային հողեր, /11-001-0227-0001-01/ | | նշանակություն՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, Գործառնական նշանակություն՝ կոմունալ ենթակացվածքների | |
| 2 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.00039 | | 0.00039 |
| 3 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.093 | | 0.093 |
| 4 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.0033 | | 0.0033 |
| 5 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.00098 | | 0.00098 |
| 6 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.0012 | | 0.0012 |
| 7 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0228-0001-01/ | 0.0004 | | 0.0004 |
| 8 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0229-0003-01/ | 0.0008 | | 0.0008 |
| 9 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0229-0003-01/ | 0.0007 | | 0.0007 |
| 10 | Նպատակային նշ. անտառային հողեր, /11-001-0229-0003-01/ | 0.00085 | | 0.00085 |

2. Գլխավոր հատակագծի փոփոխությունն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխան:

3. Նախատեսել առկա շինությունների տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ